ԵՊՀ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԵՊՀ-ԳՀՇՁԲ-17/115

ք. Երևան «30» նոյեմբերի 2017թ.

ԵՊՀ «Հիմնադրամը», ի դեմս Արամ Սիմոնյանի, որը գործում է «Հիմնադրամի» կանոնադրության հիման վրա այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Սիգռամ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Աբրահամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հակահրդեհային ազդանշանային համակարգի տեղադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3650000 (երեք միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա

վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[1]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու

դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապանաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ԵՊՀ հիմնադրամ	«Միգռամ» ՍՊԸ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	Արմավիրի մարզ, գ. Նորապատ
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 01506928	ՀՎՀՀ 01541608
Հ/Հ 247010000906	Հ/Հ 1510002022500100
Ռեկտոր՝ Ա. Սիմոնյան	Տնօրեն՝ Ն.Աբրահամյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«30» նոյեմբերի 2017 թ. կնքված
«ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/115» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ -ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	51710000-1	**Հակահրդեհային ազդանշանային համակարգի տեղադրման ծառայություն** Անհրաժեշտ է ադմինիստրատիվ մասնաշենքի 2000m² և դահլիճի տարածքում տեղադրել հակահրդեհային ազդանշանային համակարգ և հակահրդեհային ապրանքներ, որը արագ կերպով կտեղեկացնի տարածքում ստեղծված հրդեհային իրավիճակի մասին՝ միաժամանակ ավտոմատ կարգով միացնելով ձայնային ազդանշանը և կառավարման վահանակի վրա արտացոլելով տարածքի այն մասի վերաբերյալ տեղեկատվությունը, որտեղ առաջացել է հրդեհ կամ կուտակվել է ծուխ: Նաև կատարվի ամբողջ ինֆորմացիայի արխիվացում, միաժամանակ, անհապաղ տեղեկացնելով պատասխանատու անձանց զանգի միջոցով, տեղեկացնելով կատարվածի մասին: Կատարվի նաև համակարգչի օգնությամբ ողջ հակահրդեհային համակարգի աշխատունակության հսկում: Պետք է ստեղծվի ճկուն արձագանքման ալգորիթմ, որը կինտեգրվի նաև համընդհանուր օգտագործման ծրագրային փաթեթներին: Այս միասնական համակարգը ստեղծելու համար անհրաժեշտ է վահանակը միացնել համակարգչին լարերով և ունենալ համապատասխան ծրագրային ապահովում: Տարածքի հակահրդեհային ազդանշանային համակարգը պետք է միավորվի և ծրագրավորվի և համապատասխան սարքերով միացվի գործող համակարգի վահանակին, միաժամանակ պետք է			1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	Դեկտեմբեր

		ունենա անկախ աշխատող համակարգ: Տվյալ աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան մասնագիտական փաստաթղթեր: Համակարգում օգտագործվող սարքավորումներն ու օժանդակ նյութերի ցանկը, քանակները, նրանց տեխնիկական հատկանիշները կից ներկայացվում են. 1. Կառավարման վահանակ՝ Matrix 816 մակնիշի նախատեսված է հակահրդեհային ազդանշանային համակարգի սարքավորումների ղեկավարման համար: Լրակազմի մեջ պարունակվում է նաև կառավարման ստեղնաշար: Տեխնիկական բնութագիրը՝ -ապահովում է մինչեւ 320 տվիչների միացում - Լարումը փոփոխական՝ 230/17Վ, min 20Վտ, 50 հերց - Մարտկոցը՝ 12Վ, 7.2Աժ - Մշտական ելնող հոսանքը՝ 13.8Վ, max 0.8Ա -Պահպանման գոտիների առավելագույն քանակը՝ 32 - Պահպանման անկախ ենթահամակարգերի քանակը՝ 4 - Շլեյֆերի քանակը հիմնական սալիկի վրա 8/16 (կրկնապատկելու հնարավորությամբ) - Ծրագրավորվող ելք՝ սալիկի վրա 4՝ մինչև 12 մեծացնելու հնարավորությամբ - Մինչև 300 իրադարձությունների գրանցում՝ ժամանակի նշումով - Ներկառուցված թվային կոմունիկատոր - Կոմունիկատորի ուժեղացված պաշտպանություն՝ 2.75կՎ, 125Ա - RS232 պորտ - համակարգչին միացնելու հնարավորություն - արտաքին հեռախոսակապին միացնելու հնարավորություն MX-Voice մոդուլի միջոցով՝ 8 ձայնային հաղորդագրությունունների համար - Իրանի չափսերը՝ 228x243x75 մմ 2 ծրագրային ապահովում 3. համակարգչային քարտ RS232/USB PC համակարգչին միանալու համար 4. GSM մոդեմ՝ նախատեսված է տվյալների փոխանցման հեռակառավարման համակարգի միջոցով 10 համարանի, ձայնային ազդանշանի տեղեկատվության ժամանակի տևողությունը 20վրկ. 5. PSU՝ նախատեսված է ազդանշանային համակարգը կայուն և անխափան հոսանքով սնուցելու համար: Հզորությունը 12 V*3A մարտկոցը՝ 12 V-7,2 A: 6. Մարտկոց՝ նախատեսված է համակարգը ավտոնոմ ռեժիմով աշխատեցնելու համար, 12 V , 7 A: 7. Տվիչ՝ CM-WS19L մակնիշի օպտիկական, նախատեսված է շինության մեջ առաջացող ծխի, հրդեհի հայտնաբերման և վահանակին համապատասխան ազդանշան հաղորդելու համար: Համապատասխան՝ ստանդարտ EN54-part7: Հոսանքը՝ 24V, աշխատանքային պայմանները՝ ջերմաստիճանը - 10^{0}C –ից մինչև +50^{0}C, խոնավությունը մինչև 95%, իրանի նյութը՝ պլաստմաս, գույնը՝ սպիտակ, ընթացիկ			

		սպառումը՝ ոչ ավել 2mA, տագնապային լուսային ազդանշանը՝ կարմիր գույն, հաճախականությունը՝ 10MHz-1GHz 20V/m: 8. Մալուխ՝ նախատեսված է համակարգի սարքավորումները միմյանց միացնելու և համակարգը աշխատեցնելու համար: Տեսակը՝ 4x0,25 մմ, պղնձից (իմպորտ): 9. Մալուխ՝ նախատեսված է համակարգը աշխատեցնելու համար: Տեսակը՝ 8x0,25 մմ, պղնձից (իմպորտ): 10. Կոճակ՝ նախատեսված է հակահրդեհային համակարգը (տագնապային ազդանշանը) ձեռքով միացնելու համար:Աշխատում է 12 V GS կամ WS տարբերակով, 45/65 Hz հաճախականությամբ, 3.0A: Sata ID-1 REF1 տեսակի կամ համարժեք: 12 V -ից ցածր լարման դեպքում տագնապի ազդանշանը ավտոմատ կարգով անջատվում է (հոսանքի ցածր լարման ժամանակ չի աշխատում): 250 V VAC կամ WS դեպքում առավելագույն լարումը 8.0 A: 11. Շչակ՝ նախատեսված է տագնապի ազդանշանը ազդարարելու համար: Տեսակը՝ ներքին, հզորությունը 125 դեցիբել: 12. Փողրակ Հրշեջ փողրակը պատրաստված լինի ГОСТ 51049-2008-ին համապատասխան: ГР-50 տեսակի մանեկներով միացված: Արտաքին և ներքին ջրամեկուսիչ շերտը պատված լատեքսային ջրամեկուսիչ նյութով, սեղմվող ճնշումը 3.5 Մպա, աշխատանքային ճնշումը ոչ պակաս /1.6 Մպա/, խողովակի-ծորակի տրամագիծը 50 մմ, քաշը 10 կգ: Նախատեսված ջրի և փրփրահեղուկի համար pH=7-10, համապատասխանի արտաքին ճնշումային դիմադրությանը /բենզին, յուղ/: Փողրակը նախատեսված է -60°C մինչև +40°C աշխատանքային ջերմաստիճանի ինտերվալով և մեղմ կլիմայական պայմաններում հրշեջ ներքին և արտաքին աշխատանքների համար: Ծածկույթի ներքին և արտաքին շերտի գործվածքների միջև կապի ամրություն ոչ պակաս 10.0, ներքին շերտի հաստությունը ոչ պակաս 0.3մմ: 13. Կրակմարիչ ԿՓ-4 A, B, C, E, դասի Կրակմարիչ փոշային ԿՓ-4 ՝ (з) A, B, C, E, դասի հրդեհների մարման համար, լիցքավորված փոշու զանգվածը՝ 4+-0.2 կգ 2A-55B C-E, շթի երկարությունը, 3 մ, շահագործումը -50 C -ից մինչև + 50 0 C ջերմաստիճանի սահմաններում, աշխատանքային ճնշումը 1,4+-0,2 Մպա, կրակմարիչի քաշը ոչ ավել 5.9 կգ, եզրաչափերը՝ 490*130, 466*157, լրակազմը պարունակում է մեկ կրակմարիչ, մեկ անձնագիր իր տեխնիկական և օգտագործման ուղեցույցով, գործարանային կնիքով հաստատված:			

ՀՀ	Անվանումը	Չ/Մ	Քանակը
1	Կառավարման վահանակ	Լ-կ	1
2	MC2.0 ծրագիր	հատ	1
3	համակարգչային քարտ	հատ	1
4	GSM մոդեմ	հատ	1
5	PSU	հատ	1
6	Մարտկոց	հատ	2
7	Տվիչ	հատ	100
8	Մալուխ 4x0,25 մմ	մետր	1000
9	Մալուխ 8x0,25 մմ	մետր	300
10	Կոճակ	հատ	4
11	Շչակ	հատ	2
12	Փողրակ	մետր	600
13	Կրակմարիչ	հատ	40

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԵՊՀ հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01506928
Հ/Հ 247010000906
Ռեկտոր՝ Ա. Սիմոնյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Սիգռամ» ՍՊԸ
Արմավիրի մարզ, գ. Նորապատ
«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 01541608
Հ/Հ 15100020225001 00
Տնօրեն՝ Ն.Աբրահամյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«30» նոյեմբերի 2017թ. կնքված
«ԵՊՀ-ԳՀՄՁԲ-17/115» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**	
			դեկտեմբեր	Ընդամենը
1	51710000-1	Հակահիդեհային ազդանշանային համակարգի տեղադրման ծառայություն	100%	100%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԵՊՀ հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01506928
Հ/Հ 247010000906
Ռեկտոր՝ Ա. Սիմոնյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Սիգռամ» ՍՊԸ
Արմավիրի մարզ, գ. Նորապատ
«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 01541608
Հ/Հ 1510002022500100
Տնօրեն՝ Ն.Աբրահամյան

(ստորագրություն)

Կ.Տ.